ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 դեկտեմբերի 2019թ. N 1152- Ա

ք. Ստեփանակերտ

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ, 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել, որ 2019 թվականին գիշատիչ կենդանիների հարձակման հետևանքով վնաս կրած Արցախի Հանրապետության Հադրութի և Մարտունու շրջանների մի շարք համայնքների բնակիչներին (այսուհետ՝ բնակիչներ) անկած յուրաքանչյուր գլուխ գյուղատնտեսական կենդանու դիմաց միանվագ տրամադրվում է պետական աջակցություն՝ անկած գյուղատնտեսական կենդանու արժեքի 50 տոկոսի չափով:

2. Թույլատրել Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ սույն որոշման 1-ին կետով նախատեսված պետական աջակցության գործընթացն ապահովելու նպատակով «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի 04 բաժնի 2 խմբի 1 դասի «12 Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր» ծախսային ծրագրի «Բնակլիմայական անբարենպաստ պայմանների հետևանքով տուժած հողօգտագործողներին և տեխնածին աղետների ու գիշատիչ կենդանիների հարձակման հետևանքով վնաս կրած բնակիչներին աջակցություն» միջոցառմամբ նախատեսված միջոցներից 2 445 750 (երկու միլիոն չորս հարյուր քառասունհինգ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ հատկացնել բնակիչներին՝ համաձայն հավելվածի (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 472900 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի դեկտեմբերի 27ի
N 1152-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
2019 թվականին գիշատիչ կենդանիների հարձակման հետևանքով վնաս կրած Արցախի Հանրապետության Հադրութի և Մարտունու շրջանների մի շարք համայնքների բնակիչների

Հ/հ	Անսասնատեր	Համայնք	Խ.Ե.Կ.				Մ.Ե.Կ.				Խոզ				Ծի				Ընդամենը /ՀՀ դրամ/	Տրամադրվող պետական աջակցության չափը /ՀՀ դրամ/
			գլուխ	տեսակը	կենդանի քաշը(կգ)	ընդամենը /ՀՀ դրամ/	գլուխ	տեսակը	կենդանի քաշը(կգ)	ընդամենը /ՀՀ դրամ/	գլուխ	տեսակը	կենդանի քաշը(կգ)	ընդամենը /ՀՀ դրամ/	գլուխ	տեսակը	կենդանի քաշը(կգ)	ընդամենը /ՀՀ դրամ/		
1	Ստեփանյան Ռոմշան	ԱՀ, Հադրութի շրջան, գ.Տումի	1	կով	400	360000													***360000***	***180000***
2	Գասպարյան Դավիթ	ԱՀ, Հադրութի շրջան, գ.Տումի	1	ցուլ	200	280000													***280000***	***140000***
3	Շահրամանյան Ապրես	ԱՀ, Մարտունու շրջան, գ.Կարմիր շուկա	1	կով	295	265500													***265500***	***132750***
4	Խաչատրյան Ռաֆիկ	ԱՀ, Մարտունու շրջան, գ.Մյուրիշեն	2	երինջ	350	420000													***420000***	***210000***
					250	300000													***300000***	***150000***
5	Քամալյան Վանյա	ԱՀ, Մարտունու շրջան, ք. Ճարտար					6	մաքի	300	270000									***270000***	***135000***
6	Ավանեսյան Վարուժան	ԱՀ, Մարտունու շրջան, ք. Ճարտար	1	կով	275	247500													***247500***	***123750***
			1	հորթ	45	67500													***67500***	***33750***
7	Առստամյան Արտեմ	ԱՀ, Մարտունու շրջան, գ.Աշան	1	երինջ	120	144000													***144000***	***72000***
8	Հարությունյան Համլետ	ԱՀ, Մարտունու շրջան, գ.Աշան	3	ցուլ	180	252000													***252000***	***126000***
					200	280000													***280000***	***140000***
					200	280000													***280000***	***140000***

9	Խաչատրյան Արթուր	ԱՀ, Մարտունու շրջան, գ.Վարանդա									6	մերուն	600	600000					***600000***	***300000***
											7	մատղաշ	350	420000					***420000***	***210000***
10	Ավանեսյան Սլավիկ	ԱՀ, Մարտունու շրջան, գ.Սոս	1	կով	400	360000													***360000***	***180000***
11	Մուսայելյան Արարատ	ԱՀ, Մարտունու շրջան, գ.Թաղավարդ													1	զամբիկ	350	245000	***245000***	***122500***
															1	մտրուկ	100	100000	***100000***	***50000***
Ընդամենը			***12***		***2515***	***3256500***	***6***		***300***	***270000***	***13***		***950***	***1020000***	***2***		***450***	***345000***	***4891500***	***2445750***

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ